ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-3

Երևան «06» 07 2018թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Նունե Խաչատրյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Յասոն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ.Խուրշուդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **352800 (երեք հարյուր հիսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ	**<<Յասոն>> ՍՊԸ**
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	**Հասցե՝ Երևան, Վրացական 16**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**Բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ**
Հ/Հ՝ [redacted]194215	**Հ/Հ՝ 1510002226470100**
ՀՎՀՀ՝ 02506364	**ՀՎՀՀ՝ 02540338**
Ս. Սաչատրյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
«06» 07 2018թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-3 ծածկագրով
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր քանակը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	կատարման	
								հասցեն	ժամկետը**
1	22451180/11	ՔԿԱԳ-ի դիմումների հաշվառման մատյան	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ /200էջ/:	հատ	55	818.18	45000	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:

2	22451180/12	ՔԿԱԳ-ի ծննդյան դիմումների հաշվառման մատյան	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ /200էջ/:	հատ	55	818.18	45000	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:
3	22451180/4	ՔԿԱԳ-ի տեղեկանքների վերաբերյալ դիմումների հաշվառման մատյան	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ /200էջ/:	հատ	55	818.18	45000	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:

4	22451180/5	ՔԿԱԳ-ի վկայականների ելքի հաշվառման մատյան	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ /200էջ/:	հատ	55	818.18	45000	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:
5	22451180/8	Դիմում /հայտարարություն Ձև 3	Չափսը՝ -21սմx29.7սմ Տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով, օֆսեթ եղանակով Թուղթը՝- օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի):	հատ	4200	5.34	22440	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:
6	22451180/32	Դիմում /հայտարարություն Ձև 4	Չափսը՝ -21սմx29.7սմ Տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով, օֆսեթ եղանակով: Թուղթը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի)	հատ	4000	5.34	21360	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:

16	22451180/18	Ելքի մատյան-2	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 200 թերթ/400էջ/	հատ	3	1700.00	5100	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:
17	22451180/26	Անցագրերի հաշվառման մատյան	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ/200էջ/	հատ	3	1700.00	5100	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:

18	22451180/27	Վկայականների հաշվառման մատյան	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ/200էջ/	հատ	3	1700.00	5100	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:
19	22451180/19	Գրանցամատյան աշխատանքային պայմանագրերի	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ/200էջ/	հատ	4	1700.00	6800	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:

20	22451180/28	Հրամանագիրք	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ/200էջ/	հատ	5	1700.00	8500	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:
21	22451180/20	Պատժի ավարտից հետո դատապարտյալին տրվող տեղեկանքի մատյան	Չափսը՝ -30սմx42սմ, A3, հերթական համարակալում, սկսած 002101-ից: Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- միակողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ/200էջ/:	հատ	30	960.00	28800	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում:

25	22451180/22	Նախարարության աշխատակազմի ձևաթուղթեր	Չափսը՝ -21սմx29.7սմ, A4 Թուղթը՝ ոչ կավճապատ, օֆսեթ-110գ/մ2 խտությամբ, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի), գունավոր զինանշանով: Տպագրությունը- միակողմանի, գունավոր՝ առնվազն 4 գույն, օֆսեթ եղանակով:	հատ	3000	14.40	43200	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:
26	22451180/13	Անցաթերթ A4	Չափսը՝ -21սմx29.7սմ, A4 Թուղթը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի): Տպագրությունը՝- միակողմանի, 1 գույնով, օֆսեթ եղանակով:	հատ	5000	5.28	26400	Ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:
	ԸՆԴԱՄԵՆԸ					352800		

<u>Բոլոր չափաբաժինների համար.</u> Նշված գնման առարկաները պետք է տպագրվեն Պատվիրատուի մոտ առկա օրինակելի ձևին և սույն բնութագրին համապատասխան: Օրինակելի ձևերը գտնվում է ՀՀ ԱՆ գործերի կառավարչությունում՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8 հասցեում: Կատարման վերջնաժամկետները չեն կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ա.Սաչատրյան

ԿԱՏԱՐՈՂ

Տ.Հովհաննիսյան

Հավելված
«06» 07 2018թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-3 ծածկագրով
պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	անվանումը	CPV ծածկագիրը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018թ. պետական բյուջեով համապատասխան ֆինանսական միջոցների չափով և համամասնությամբ՝ ըստ ամիսների՝ ընդ որում**				Ընդամենը
			1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	տարի /մինչև դեկտեմբերի 20-ը/	
1	22451180/11	ՔԿԱԳ-ի դիմումների հաշվառման մատյան	-	-	45000	45000	45000
2	22451180/12	ՔԿԱԳ-ի ծննդյան դիմումների հաշվառման մատյան	-	-	45000	45000	45000
3	22451180/4	ՔԿԱԳ-ի տեղեկանքների վերաբերյալ դիմումների հաշվառման մատյան	-	-	45000	45000	45000
4	22451180/5	ՔԿԱԳ-ի վկայականների ելքի հաշվառման մատյան	-	-	45000	45000	45000
5	22451180/8	Դիմում /հայտարարություն Ձև 3	-	-	22440	22440	22440
6	22451180/32	Դիմում /հայտարարություն Ձև 4	-	-	21360	21360	21360
16	22451180/18	Ելքի մատյան-2	-	-	5100	5100	5100
17	22451180/26	Անցագրերի հաշվառման մատյան	-	-	5100	5100	5100
18	22451180/27	Վկայականների հաշվառման մատյան	-	-	5100	5100	5100
19	22451180/19	Գրանցամատյան աշխատանքային պայմանագրերի	-	-	6800	6800	6800
20	22451180/28	Հրամանագիրք	-	-	8500	8500	8500

21	22451180/20	Պատժի ավարտից հետո դատապարտյալին տրվող տեղեկանքի մատյան	-	-	28800	28800	28800
25	22451180/22	Նախարարության աշխատակազմի ձևաթուղթ	-	-	43200	43200	43200
26	22451180/13	Անցաթերթ A4	-	-	26400	26400	26400
Ընդամենը՝			-	-	**352800**	**352800**	**352800**

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Է. Խաչատրյան

ԿԱՏԱՐՈՂ

Տ. Կոսրշունյան